

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1890-ԱԿԱՆ ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ
ՓՐԿՎԱԾ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Բանալի բառեր – Մկրտիչ Խրիմյան, Ավետիս Օհանջանյան, 1890-ական թթ. արևմտահայերի կոտորածներ, գաղթականություն, Կովկասի Հայոց Բարեգործական ընկերություն (ԿՀԲԸ), Վաղարշապատի մասնաճյուղ

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը շարունակում էր դաժան քաղաքականություն կիրառել իր ենթակայության տակ հեծող ժողովուրդների և հատկապես արևմտահայության նկատմամբ: Հայ ժողովրդի հանդեպ գործադրվող բռնություններն առավել ցայտուն դրսևորվեցին Աբդուլ Համիդ II-ի գահակալության օրոք (1876-1908), որը պայմանավորված էր Հայկական հարցի արծարծմամբ և հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքով: Հայկական հարցը, որն ասպարեզ իջավ և միջազգային դիվանագիտության քառուղիները մխրճվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, ուրվականի նման հետապնդում էր Աբդուլ Համիդին: Ըստ Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի՝ Բարձր Դուռը պարտավորվում էր հայաբնակ մարզերում իրականացնել բարենորոգումներ, ապահովել արևմտահայության անվտանգությունը և օսմանահպատակ հայերին զերծ պահել քրդերի ու չերքեզների բռնություններից: Սակայն, ըստ ֆրանսիացի ականավոր պատմաբան Ալբեր Վանդալի բնորոշման՝ «կարմիր սուլթանը»¹ Գերմանիայի կայսրին խոստովանել է, որ «նախընտրում էր մեռնել, քան թե ընդունել Արևելյան Անատոլիան ինքնավարության տանող բարենորոգումները»²: Բացի դրանից, առաջ քաշելով պանիսլամիզմի գաղափարախոսությունը, նա ցանկանում էր Օսմանյան կայսրության շուրջ համախմբել ամբողջ մուսուլմանական աշխարհը, քանզի համոզված էր, որ «մահմեդական աշխարհում ինքն է ամենաուժեղը, ինքն է, որ կարող է համախմբել իր շուրջ ամբողջ այդ աշխարհը»³: Բայց քանի որ այդ ծրագրի իրագործման ճանապարհին ազգային-ազատագրական գաղա-

¹ Տե՛ս **Վանդալ Ա.**, Հայերը և բարենորոգումները Թուրքիայում, Երևան, 2001, էջ 19:

² **Սաֆրասոյան Ռ.**, Հայոց ցեղասպանության համիդյան ծրագիրը, Հայոց պատմություն, հատոր երրորդ, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 506:

³ **Համբարյան Ա.**, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999, էջ 41:

փարներով տոգորված հայերը լուրջ խոչընդոտ էին, ուստի Հայական հարցի «լուծումը» Աբդուլ Համիդը տեսնում էր ի դեմս հայ ժողովրդի բնաջնջման:

Արևմտահայության զանգվածային կոտորածները պետական քաղաքականության մակարդակով նա իրականացրեց 1894-1896 թթ.: Փաստորեն դա օսմանյան կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ կիրառված ցեղասպան քաղաքականության առաջին փորձն էր: Այդ ոճրագործության իրականացման համար գործիք դարձան քրդերը, ինչպես նաև մուլեռանդ մուսուլմաններն առհասարակ, որոնց կառավարությունը հանձնարարել էր անխնա կոտորել Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ վայրերում բնակվող հայերին: 1892 թ. ի վեր Աբդուլ Համիդի հրամանով կյանքի կոչվեցին մուսուլմանական ոչ կանոնավոր հեծելազորային՝ սուլթանի անունը կրող «համիդիե» զնդերը¹, որոնք կառավարության անմիջական օժանդակությամբ կազմված էին հիմնականում քուրդ աշիրեթներից: Ըստ «Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի տվյալների՝ 1896 թ. փետրվարի դրությամբ ամբողջ Փոքր Ասիայում ավերվել են 39.749 տուն, 7942 խանութ, սպանվել են 37.085 քրիստոնյա, 938 մուսուլման, բռնությամբ կրոնափոխվել՝ 40.950 հայ, միաժամանակ համայն աշխարհով սփռվել 290.300 արևմտահայ²:

Ընդհանուր առմամբ, 1890-ական թթ. Աբդուլ Համիդ Բ-ի կազմակերպած արևմտահայության զանգվածային կոտորածների զոհերի թիվը հասավ 300.000-ի: Համիդյան կոտորածներից մազապուրծ արևմտահայերի մի մասը հարկադրաբար դիմեց գաղթի: Սակայն այդ թշվառ փախստականները փորձությունների ենթարկվեցին նաև գաղթի ճանապարհին: Նախ նրանցից շատերը՝ հատկապես կանայք և ծերերը, ճանապարհին իրենց մահկանացուն կնքեցին սովից, ցրտից և տարատեսակ հիվանդություններից, իսկ նրանք, որոնց հաջողվեց հասնել Օսմանյան կայսրության սահմանին, ենթարկվեցին քրդերի նոր հարձակումների և կոդալուտի³:

Ապրուստի անզամ տարրական միջոցներից զուրկ հայ փախստականները գտնվում էին սոցիալ-տնտեսական ծանր վիճակում: Անբավարար սննդի և կենցաղային պայմանների բացակայության հետևանքով նրանց շրջանում տարածվում էին տարբեր հիվանդություններ: Այս պայմաններում ծառանում էր արևմտահայերին նյութական և բարոյական օգնություն ցուցաբերելուն միտված՝ շտապ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն:

Ի թիվս այլոց, հայ գաղթականներին օգնության ձեռք մեկնեցին արևելահայ և ռուս առաջադեմ հասարակության ներկայացուցիչները: Նրանց օգնե-

¹ Միմոնյան Հր. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 64:

² Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 6.

³ Մանրամասն տե՛ս «Երկիր», 1906, թիվ 33.08.11, էջ 3-4:

լու համար հիմնադրվեցին բարեգործական, հասարակական և կրոնական տարբեր կազմակերպություններ ու ընկերություններ: 1897 թ. Մոսկվայում Գրիգոր Ջանշյանի խմբագրությամբ լույս տեսած «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»¹ գրքի վաճառքից ստացված ամբողջ հասույթը պետք է տրամադրվեր հայ կարոտյալներին:

Միջազգային հանրությունը ևս ջանքեր գործադրեց ամոքելու տառապյալ արևմտահայության վիճակը: Հանգանակություններ կազմակերպվեցին ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Ռուսաստանում և այլուր: Նշենք, օրինակ, որ 1896 թ. մարտին Մեծ Բրիտանիայում հավաքվել էր 34.000 ֆունտ ստեռլինգ հայ տառապյալներին օգնելու համար²:

Օգնությունը գաղթականներին էր հասնում բժիշկ Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ 1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում հիմնադրված Կովկասի հայոց բարեգործական ընկերության (այսուհետև՝ ԿՀԲԸ) միջոցով, որը ղեկավարում էին խորհուրդը և տեղական վարչությունը: 1899 թ. այն ուներ 21 մասնաճյուղ (Երևանում, Վաղարշապատում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Շուշիում, Վլադիկավկազում և այլուր): ԿՀԲԸ-ն ստանձնել էր հայ գաղթականներին օգնելու մարդասիրական գործի մեծ մասը:

Արևմտահայ գաղթականներին ապաստանեց նաև Էջմիածնի գավառը: Այստեղ իր գործունեությունն էր ծավալել ԿՀԲԸ-ի՝ 1889 թ. հիմնադրված Վաղարշապատի մասնաճյուղը, որի առաջին ընդհանուր ժողովը գումարվել է 1889 թ. սեպտեմբերի 28-ին Գրիգոր քահանա Տեր-Գրիգորյանի նախագահությամբ: Նրա անդամների թիվը տատանվում էր 40-ից 65-ի միջև, իսկ տարեկան բյուջեն կազմում էր 400-ից 800 ռուբլի:

Ստորև առաջին անգամ հրապարակվում են արևմտահայ գաղթականներին պատսպարելու համար 1896 թ. ԿՀԲԸ Վաղարշապատի մասնաճյուղի ձեռնարկած քայլերը լուսաբանող փաստաթղթեր, որոնք պահվում են ՀՀ ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ), թիվ 28 (Կովկասի հայոց բարեգործական ընկերություն) ֆոնդում:

Պահպանել ենք փաստաթղթերի լեզվական և ոճական առանձնահատկությունները: Բոլոր ընդգծումները բնագրային են, իսկ մեր միջամտություններն արված են ուղղագիծ փակագծերում: Փաստաթղթերին կցել ենք վերնագրեր և ծանոթագրություններ:

ԼԻԼԻԹ ՔՈՍՅԱՆ

¹ Ст. и Братская помощь пострадавшим в Турции армянам.

² «Տարազ», 1896, թիվ 12, էջ 195:

**ԿՀԲԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՒՑԱԳԻՐԸ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՊԱՍՏՆԱԾ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՅՈՒՑԱԲԵՐՎՈՂ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

26 [հոկտեմբերի 1896 թ.]
[Վաղարշապատ]

Երբ նոր էր սկսուել տաճկահայաստանցիների գաղթականութեան հոսանքը դէպի մեր կողմերը, վարչութիւնս, տեղեկանալով դոցա թշուառ դրութեան մասին և լսելով, որ Վաղարշապատում տարածուած են զանազան վարակիչ (տիֆ ու տիֆրիքիտ)¹ հիւանդութիւններ, որոնց կարող էին ենթակայ լինել մեծ մասամբ չքաւորները և տառապեալները, իւր օգոստոսի 3-ի վարչական ժողովում (№ 24 արձանգ[րութիւն]) որոշեց՝ չքաւոր հիւանդներին և տառապեալներին անմիջական օգնութիւն հասցնելու հարցը յանձնել վարչութեանս պ. նախագահին² և վարչութեանս անդամ պ. Պ. Սուքիասեանին, որպէս զի սոքա միջոցներ ձեռք առնեն վարակիչ հիւանդութիւնների տարածման առաջն առնելու թէ գաղթականների և թէ առհասարակ չքաւորների վերաբերմամբ, գործադրելով տառապեալներին յատկացրած գումարի մի մասը, որի մասին տեղեկութիւն է տրուած և Խորհրդին: Բայց որպէս զի հասարակութիւնը տեղիակ լինի այս որոշման և գաղթականների ու տառապեալների կարօտութեան ժամանակ անմիջապէս դիմի վարչութիւնս՝ Վարչութիւնս դեռ օգոստոսի սկզբներում պաշտոնապէս իւր գրութեամբ դիմեց տեղիս, որ Գաւառապետին (№ 57)³ և արժանապատիւ գործակալին (№ 59), խնդրելով գիւղական քահանաների և գիւղական տանուտէրերի միջոցով յայտարարել վարչութեանս որոշումը հասարակութեանը: Նոյն բովանդակութեամբ երկու գրութիւններ ևս (№№ 60 և 61) ուղարկուած են գաւառական և վանական պ. պ. բժիշկներին, որպէս զի նոցա դիմող չքաւոր հիւանդների դրութեան մասին յայտնեն վարչութեանս և վարչութիւնս ժամանակին կարողանայ հոգալ տառապեալ և գաղթական հիւանդների դեղերի և սննդի մասին: Որովհետև վանական բժիշկ պ. Տէր-Խաչատրեանը մի չքաւոր հիւանդի մէկ անգամ այցելելուց յետոյ չկամեցաւ ոչ մի յարաբերութիւն ունենալ վարչութեանս հետ, ուստի վարչութեանս պ. նախագահը և անդամ պ. Պ. Սուքիասեանը գաւառական բժիշկ պ. Սաժումեանի աջակցութեամբ օգոստոսի

¹ Սուր վարակիչ, գլխավորապէս մանկական հիվանդություն, որի ժամանակ ախտահարվում են կոկորդը և քթի լորձաթաղանթը:

² Նկատի ունի Ավետիս Օհանջանյանին:

³ Գրության հերթական թիվն է:

սկզբից սկսած մինչև այժմ ամենայն օր այցելել են գաղթական հիւանդներին գիւղի մէջ, իսկ մինչև հոկտեմբերի 1-ը վանքի գոմանոցում գտնուած գաղթական հիւանդներին օգնութիւն հասցնելով 140 գաղթականների, որոնց ցուցակը կցում է¹ սորան: Հոկտեմբերի 1-ին Վարչութիւնս, լսելով, որ վանական բժիշկ պ. Տէր Խաչատրեանը սկսել է այցելել վանքի գոմանոցի հիւանդներին՝ իւր ուշադրութիւնը դարձրեց միայն գիւղի մէջ բնակուող գաղթականների վրայ, մի կողմից բժշկական օգնութիւն հասցնելով հիւանդներին, իսկ միւս կողմից աշխատութեան միջոցներ փնտրելով առողջ գաղթականների համար՝ տղամարդկանց այգիներում բանելու, իսկ կանանց ու աղջկերանց բամբակ չանաքելու²:

Երբ գաղթականութեան հոսանքը աւելի ևս սկսեց սաստկանալ, Վարչութիւնս ի նկատի ունենալով թէ իւր սուղ միջոցները և թէ գաղթականների թշուառ վիճակը իւր 10ն հոկ[տեմբերի] սոյն ամսի № 68 գրութեամբ դիմեց ընկերութեան Երևանի ճիւղի վարչութեանը, [որը] սոյն նոյեմբերի 2-ի № 36 գրութեամբ մերժեց վարչութեանս առաջարկութիւնը, յայտնելով, իր ինքն ևս նիւթական օգնութեան կարոտութիւն ունի, իսկ խորհուրդը 19-ն հոկտեմբերի սոյն ամի իւր № 225 գրութեամբ ուղարկելով վարչութեանս 100 ր[ուբլի] օժանդակութիւն, առաջարկում է մանրամասն տեղեկութիւն ժողովել գաղթականների դրութեան մասին և առաջարկել³ Խորհրդին: Վարչութիւնս ժողովելով մանրամասն տեղեկութիւն և կազմելով տեղումս եղած գաղթականների ցուցակը, նոցա կարիքների հետ միասին հոկտեմբերի 29-ին № 30 արձանագրութեամբ կազմել է հետևեալ նախահաշիւը Վաղարշապատում բնակեցրած 26 տուն գաղթականներին մինչև ապրիլ ամիսը օգնելու համար.

1. Հիւանդներին բժիշկի, դեղորայքի և սննդի	50 ր[ուբլի]
2. Յորեն 285 փութ	152 ր[ուբլի]
3. Միս շաբաթը մէկ անգամ	65 ր[ուբլի]
4. Վառելիք, 3000 [հատ] աթար	50 ր[ուբլի]
5. Բնակարանի վարձ	48 ր[ուբլի]
6. Ջրօրհնէքի և բարեկենդանի տոներին	52 ր[ուբլի]

Գումար 417 ր[ուբլի]

Սոյն նախահաշիւը վարչութեանս 30 հոկ[տեմբերի] № 74 գրութեամբ գաղթականների մանրամասն ցուցակի հետ միասին ուղարկելով Խորհրդին, անմիջապէս աշխատել է գնել գաղթականների համար 37 ր[ուբլի] 35 կոպէկի աթար, որոնցից 1500 հատը արդէն բաժանուած է գաղթականներին, իսկ 900

¹ Ցուցակը հայտնաբերել մեզ չհաջողվեց:

² Չանաքել - բամբակը քաղել՝ հավաքել:

³ Դիմել:

հ[ատր] պահուած է հարկաւոր ժամանակ օգնութեան հասնելու: Վառելիքից յետոյ վարչութիւնս աշխատեց հոգ տանել ցորենի մասին և վանական կառավարութեան համաձայնութեամբ որոշուեցաւ 8 խավար¹ ցորեն գնել՝ խավարը 15 ռ[ուբլի], որ կանէ 120 ռ[ուբլի], սակայն մինչև մեշոկներ պատրաստելը և փողի մասին որոշում կայացնելը, գումանոցի մի քանի գաղթականներ դիմեցին Վարչութեանս խնդրելով օգնութեան հասցնիլ այնտեղ պատկած հիւանդներին և բնակարան գտնիլ: Վարչութիւնս քննելով նոցա դրութիւնը, իր[ո]ք տեսաւ, որ մի կողմից գումանոցում բնակվում են 22 տուն գաղթականներ՝ բաղկացած 125 անձերից, որոնցից 27 հոգի հիւանդ պատկած են նոյն գումանոցի աղտոտութեան մէջ միանգամայն անխնամ, միւս կողմից այն հանգամանքը, որ գաղթական կանայք շարունակ ենթակայ են լինում ծառայողների կողմից անպատուաբեր խօսքերի և վարմունքների, իսկ երրորդ կողմից վանական շինութիւնը, որ Նորին Վեհափառութիւնը² յատկացրել էր գաղթականներին, սակայն անուշադիր թողնուած, միայն մէկ հիւանդ էր պատկած հիւանդանոցում (վանեցի քահանայ Դաւիթ), 5^ս սոյն նոյեմբերի իւր № 78 գրութեամբ դիմեց պաշտօնապէս Նորին Վեհափառութեանը, խնդրելով տալ վարչութեանս գաղթականների համար յատկացրած հիւանդանոցը, որպէս զի վարչութիւնս գումանոցի և գիւղի բոլոր հիւանդներին տեղաւորի հիւանդանոցի 3 սենիակներում, իսկ մնացած սենիակները յատկացնի գումանոցի գաղթականներին, որպէս ապաստարան, խնդրելով միննոյն ժամանակ բարեհաճել, եթէ կարելի է տալ գիւղի և ապաստանարանի գաղթականներին հաց և կիրակուր: Նորին Վեհափառութիւնը ուշադրութեան առնելով վարչութեանս գրութիւնը և պահանջելով Վարչութեանս Նախագահին յայտնել էր, որ համաձայն է կատարել վարչութեան խնդիրը, սակայն կերակուր չկարողանալով տալ, կարող է միայն կերակրի համար նիւթեր տալ, որպէս զի վարչութիւնս պատրաստել տայ, կամ բաժանէ գաղթականներին առանձին առանձին իրիանց բնակարաններում պատրաստելու:

Վարչութիւնս իւր 32-երորդ նիստում կազմելով 1897 թուի նախահաշիւը և յատկացնելով ապաստարան հիւանդանոցին 200 ռ[ուբլի], որոշում է անձամբ գնալ և քննել հիւանդանոցը, իմանալու, թէ ինչ է կարևոր նորա պահպանութեան համար, որպէս զի կարճ ժամանակում կարելի լինի ամեն ինչ պատրաստել և գումանոցի հիւանդներին տեղափոխել հիւանդանոց. որոշելով միննոյն ժամանակ հիւանդանոցը ենթարկել կանոնաւոր ախտահանութեան: Սակայն ախտահանութիւնից յետոյ, իբր վարչութեանս անդամները քննում էին հիւանդանոցը, այնտեղ գալիս է վանական [բժիշկ] պ. Տէր

¹ Խավար - ծանրության չափ, որ հավասար է 30 փոթի: Մէկ փութը հավասար է 16 կիլոգրամի:

² Մկրտիչ Խրիմյան, Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Ա Վանեցի (1820-1907), Ամենայն հայոց կաթողիկոս (1892-1907):

Խաչատրեանը և յայտնում է, որ այդ շինութիւնը վարակուած է սիպնոյ տիֆ¹ հիւանդութեամբ, որ այդ մասին յայտնուած է Վեհափառին և իշխանութեանը և որ կրկին հիւանդանոց դարձնելու համար հարկաւոր է պատերը և առաստաղը նորից կրով սրել² իսկ հատակը ներկել: Վարչութիւնս միջոց չունենալով 2-300 ր[ուբլի] ծախսել վերանորոգութեան վրայ, որոշեց միայն 50 րուբլով թեթև վերանորոգութիւն և խիստ ախտահանութիւն կատարել՝ որոշեց նոյնպէս վարչութեանս անդամ տ. տ. Քարամեանցին ու Աւետիքեանցին ներկայանալ Նորին Վիհափառութեան և խնդրել վերանորոգութեան համար 50 ր[ուբլի]: Տիկիները ներկայանալով Նորին Վեհափառութեանը և առաջարկելով վարչութեանս բանաւոր խնդիրը, Նորին Վեհափառութիւնը օրհնել էր վարչութեան անդամներին համաձայնելով տալ վերանորոգութեան համար 50 ր[ուբլի]: Վարչութիւնս լիայոյս սրտով մինչդեռ պատրաստութիւն էր տեսնում վերանորոգութեան, յանկարծ ամսոյս 25-ին ստանում է Նորին Վեհափառութեան դիւանատնից № 1583 գրութիւնը, որով առանց պատճառների բաց է ի բաց մերժում է թէ՛ հիւանդանոցը և թէ՛ գաղթականներին հաց ու կերակուր տալը: Եւ այսպէս մօտաւորապէս մէկ ամիս յոյսով սպասելուց յետոյ վարչութիւնս ստիպուած եղաւ նոյն իսկ Նորին Վեհափառութեան մերժման օրը իւր № 33 վարչական ժողովում փոփոխութեան ենթարկել 1897 թ. համար կազմած նախահաշիւը, ձեռնարկելով ցորեն ու այլ հարկաւոր նիւթեր գտնելու գաղթականների կեանքը գոնէ մինչև ապրիլ ամիսը ապահովելու:

Ուրախալի է միանգամայն, որ յարգելի Խորհուրդը համաձայն վարչութեանս 4^ւ սոյն նոյեմբերի № 78 գրութեան ուղարկել է սոյն նոյեմբերի 9-ի № 255 և 19-ի № 276 գրութեամբ գաղթականների համար 200 արշ[ին]³ հասարակ քաթան, 600 արշ[ին] միթկալ⁴, 100 թուփ ամիրիկայ⁵ (319^{1/4} արշ[ին] երկու տակ ծալած) և 482 կտոր պատրաստի շորեր, յայտնելով միևնոյն գրութեամբ, որ շուտով վարչութիւնս կը ստանայ Բագուից կրկին գաղթականների համար թէ՛ փող և թէ՛ զանազան շորեր: Այս հիման վերայ վարչութիւնս որոշեց յանձնել վարչութեանս Նախագահին և անդամ պ. Պ. Սուքիասեանին շրջել իւր շրջանի բոլոր գիւղերը և հաստատ տեղեկութիւն ժողվեր թէ գաղթականների թուի և թէ նոցա դրութեան մասին: Վարչութեան յարգելի 2 անդամները շրջելով գիւղիւրը, ներկայացրել են հետևեալ զեկուցումը [ի նկատի ունեն այս զեկուցագիրը]:

Նախագահ վարչութեան՝ Աւետիս Օհանջանեան
Անդամ՝ Տ. Ս. Քարամեան

¹ Բժավոր տիֆ, որի ժամանակ հիվանդի մաշկը պատվում է ռսպաձև կարմիր բծերով:

² Օեփել, կոկել:

³ Երկարության ռուսական չափի միավոր, որը հավասար է 71 սանտիմետրի:

⁴ Պարսկերեն՝ քաթանից կոշտ գործվածք:

⁵ Բամբակյա գործվածք Ամերիկայից:

Հ. Աւետիքեան
Պ. Սուքիասեան

Անդամ քարտուղար Բ. Մատթէոսեան
[Մակագրություն]

Կարդացուեցաւ ամսոյս 26-ի ընդհանուր ժողովում սոյն զեկուցումը և վարչութեան երկու անդամների վարչութեանը ներկայացրած զեկուցումը: Նախագահ ընդ[հանուր] ժողովի՝ Աղէքսանդր Չուբարեան Քարտուղար՝ Ղուկաս Սարկաւազ Ճիշտ է իսկականի հետ: Քարտուղար վարչութեան՝ Դ. Թատեւոսեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թթ. 108-110 (պատճեն, ձեռագիր):

2

**ԿՀԲԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՆ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻՆ՝
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Նորին Վեհափառութեան Տ. Տ.
Մկրտչի Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց

№ 79

5^ն նոյեմբերի
1896 թ. Վաղարշապատ

Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Վաղարշապատի ճիւղի վարչութիւնը ի նկատի ունենալով մի կողմից իւր սուղ միջոցները, իսկ միւս կողմից Տաճկահայ գաղթականների թշուառ և ցաւալի վիճակը սորանով պատիւ ունի դիմել Ձերդ Վեհափառութեանը օգնութեան հասնելու վարչութեանս, որպէս զի նա միջոց և կարողութիւն ունենայ օգնութեան հասնել և այն գիւղերում բնակեցրած գաղթականներին, որոնք գտնվում են վարչութեան շրջանի մէջ:

Ձերդ Վեհափառության տնօրինութեամբ նորեկ գաղթականների համար առժամանակեայ բնակութեան տեղ նշանակուած էր վանքի գոմանոցը, իսկ հիւանդների համար՝ գիւղի մէջ գտնուած վանական շինութիւնը, ուր, որպէս տեղեկացանք, երեք, չորս հիւանդ կար պառկած: Սակայն գաղթականները բնակուելով վանքի գոմանոցում և ստանալով վանքից հաց և կերակուր ենթակա են լինում թէ՛ անպատուութեան ծառաների կողմից և թէ՛ զանազան հիւանդութիւնների շնորհիւ այն անյարմարութեան և հակառողջական պայմանների, որոնց մէջ թշուառները ստիպուած են իւրիանց դառն օրերը անց-

կացնելու, մինչդեռ գոմանոցի հիւանդներին տեղափոխելով նոցա համար նշանակուած հիւանդանոցը, իսկ առողջներին բնակեցնելով գիւղի մէջ կարելի կը լինի մի կողմից հիւանդութեան տարածման առաջն առնել, ազատելով գոնէ միւսներին վարակելուց, իսկ միւս կողմից վարչութիւնս հոգ տանելով առողջների կարիքներին միևնոյն ժամանակ աշխատութեան գործ կը գտնէ նոցա համար, որոնք ընդունակ կը լինեն աշխատելու: Ուստի վարչութիւնս պատիւ ունի խնդրել Ձերդ Վեհափառութեանը՝ յանձնել վարչութեանս հսկողութեան և խնամատարութեան ներքոյ հիւանդների համար յատկացրած վանական շինութիւնը և թոյլ տալ գոմանոցի գաղթականների տեղափոխել գիւղի մէջ գտնվող գաղթականների հացը և կերակուրը ամենայն օր տալ վանքից իսկ դոցա մնացած կարիքները բժիշկ, դեղորայք, բնակարան, վառելիք, հագուստ, անկողին, ևս կը հոգայ վարչութիւնս: Սորա հետ վարչութիւնս պատիւ ունի նիրկայացնիլ Ձերդ վիհափառութիւնը Վաղարշապատի գիւղի մէջ և վանքի մէջ բնակուող այն գաղթականների ցուցակը, որոնց համար վարչութիւնս խնդրում է հաց և կիրակուր մատակարարել վանքի սեղանատնից:

Նախագահ վարչութեան՝ Ա. Օհանջանեան
ի տեղի քարտուղարի՝ Պ. Սուքիասեան
Ճիշտ է իսկականի հետ՝ Քարտուղար
վարչութեան՝ Դ. Թատեւեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 110 շրջ.-111 շրջ. (պատճեն, ձեռագիր):

3

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿՀԲԸ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԽՆԴՐԱՆՔԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ՄՆՆԴԻ ԵՎ ՕԹԵՎԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

№1583

25 նոյեմբերի
1896 ամի
Էջմիածին

Տեղական վարչութեան Վաղարշապատայ Կ.Հ.Բ.Ը.

Դիւանս՝ ըստ բարձու հրամանի Վեհափառ Հայրապետի Ազգիս, պատիւ ինքիան վարկեանի յայտնել յարգելի վարչութեանդ՝ եթէ զխնդիր ձեր ի 5^ս նոյեմբերի 1896 ամի № 79, որով խնդրէք զվանքապատկան բնակարանս,

զից և զկերակուր վասն գաղթականաց, որք ի Վաղարշապատի, բացասեալ է ի Նորին Սուրբ Օծութինէն:

Դիւանապետ՝ Նահապետ Վարդապետ
Ճիշտ է իսկականի հետ. Քարտուղար
վարչութեան՝ Դ. Թատեւոսեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 111 շրջ. (պատճեն, ձեռագիր):

4

**ԿՀԲԸ-Ն ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ՝ ԿՀԲԸ-Ի
ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ**

25 նոյեմբերի 1896
Վաղարշապատ

Ձեկուցումն

Կ.Հ.Բ. Ընկ[երության] Վաղարշապատի վարչութեան պ. նախագահի և անդամ պ. Պ. Սուքիասեանի թէ ի՞նչ դրութեան մէջ են գտնվում շրջակայ գիւղերի գաղթականները, թէ որքա՞ն է դոցա թիւը և թէ ի՞նչ կարիքներ ունեն հոգալու:

Համաձայն վարչական 32 երորդ արձանագրութեան որոշման, չորս օր շրջելով Էջմիածնոց գաւառի շրջակայ գիւղերի մի մասը, ընդամենը 24 գիւղ, Տաճկահայաստանից եկած գաղթականների դրութիւնը, կարիքները և թիւը քննելու նպատակով և ներկայացնելով յարգելի վարչութեանդ շրջակայ 24 գիւղիբում ցրուած բոլոր գաղթականների մանրամասն ցուցակը նոցա քանակութեան, կարիքների մասին, պատիւ ունենք աւելացնելու հետևեալը.

ա 16 գիւղերում միայն կային գաղթականներ մեր շրջած 24 գիւղերից հետևեալ քանակութեամբ՝

Վերին Խաթունարխ ¹	որն ունի 72 տուն բնակիչ	պահում է 3 տուն գաղթական	բաղկացած 13 հոգուց
Ներքին Խաթունարխ ²	150	2	11
Չիբուխչի ³	160	1	4
Ղուրդուղուլի ⁴	200	2	17
Շահրիար ⁵	250	1	6
Ջաֆարապատ ⁶	70	3	16
Քյալագիարի ⁷	100	2	14
Մոլլա Բայազետ ⁸	200	5	16
Գեչրու ⁹	250	36	203
Ջեյվա ¹⁰	200	5	23
Այլանլու ներքին ¹¹	85	2	7
Ալիբեքու ¹²	95	2	7
Քյորվալու ¹³	200	1	7
Հայթաղ ¹⁴	150	7	34
Սամաղար ¹⁵	200	7	38
Այլանլու վերին ¹⁶	50	2	11
16 գիւղ	2432	81	428 հոգոյ ¹⁷

¹ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Ակնաշեն:

² Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Գայ:

³ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Վարդանաշեն:

⁴ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Արմավիր:

⁵ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Նալբանդյան:

⁶ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Գետաշեն:

⁷ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Շենավան:

⁸ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Բամբակաշատ:

⁹ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Մրգաշատ:

¹⁰ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Տարոնիկ:

¹¹ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Լենուղի:

¹² Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Աթարբեկյան:

¹³ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Արշալույս:

¹⁴ Գյուղ էջմիածնի գավառում:

¹⁵ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Գեղակերտ:

¹⁶ Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Ծաղկունք:

¹⁷ Աղյուսակ ա-ն տպագրվել է «Մշակ» թերթում (1896, թիվ 152, 28.XII, էջ 3):

բ) բոլորովին գաղթականներ չկային հետևյալ գիւղերում

1) Թագագիւղ ¹	բաղկացած է 12 տուն բնակիչներից
2) Մարգարա ²	200
3) Էվջիլար ³	80
4) Ուզունորա ⁴	100
5) Արմդու ⁵	80
6) Ղուզիգիդան ⁶	90
7) Սարդարպատ ⁷	280
8) Հաջիլար ⁸	80
8 գիւղեր	922

որոնց մեջ 30 տուն քրդեր են, որոնք բնակվում են Սարդարապատում:

գ) Մեր շրջած գիւղերում ցրուած գաղթականների վիճակը, շնորհիւ հայ գիւղացիների առատաձեռն օգնութեան միանգամայն ապահոված կարելի է համարել բնակարանի, հացի և վառելիքի կողմից, սակայն անկողնի և հագուստի կողմից միանգամայն զուրկ էին գաղթականները, առաւել ևս կանայք և մանր երեխաները ու պատանիները, որոնց վրայ հրաւիրում ենք յարգելի վարչութեանս առանձին ուշադրութիւնը:

դ) բոլոր գաղթականների մէջ միայն մէկ հոգի կար, որ գիտեր արհեստ, այն ևս հիւանդ պառկած էր անկողնում. մնացած բոլոր գաղթականները երկրագործներ են և ձմրան պատճառու գիւղերում ոչ մի գործով չեն պարապում, բացի մի քանի անձինքներից, որոնք կարողացել էին հարուստ գիւղացիներից մի քանիսի մոտ ծառայ մտնել այն ևս «հացափոր»- առանց դրամական վարձատրութեան:

ե) Վարչութեանդ ուշադրութիւնն ենք հրաւիրում և գիւղում ցրուած հիւանդ գաղթականների վրայ, որոնց թիւը հասնում էր 52 հոգու և գտնվում ին հետևեալ գիւղիւրում.

¹ Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Լքյալ:

² Գյուղ Էջմիածնի գավառում:

³ Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Արագափ:

⁴ Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Արգավանդ:

⁵ Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Տանձուտ:

⁶ Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Այգեշատ:

⁷ Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Հոկտեմբեր:

⁸ Գյուղ Էջմիածնի գավառում այժմ Սրգաստան:

1) Վերին Խաթունարխում	3 հիւանդ
2) Ներքին Խաթունարխում	2
3) Ջաֆարապատում	7 (մէկ ընտանիքում 5 հոգի)
4) Մոլլա Բայազետում	4
5) Գէչրլում	15 հիւանդ
6) Ալիբէքում	3
7) Հայթաղում	4
8) Սամաղարում	7
9) Այլանլու վերին[ում]	3
10) Քյորվալումում	1
11) Ջեյվայում	3
Գումարն է	52 հիւանդ

Բժշկի բացակայութեան պատճառով, ճկարողանալով բոլոր հիւանդներին օգնութեան հասնել, որոնց մէջ երևում էին տիֆով հիւանդներ, միայն հասարակ ջերմ ունեցողներին տալիս էինք խինին¹ և ֆինացիտին², այն ևս բժշկի օգնական պ. Պ. Սուքիասեանի խորհրդով: Սակայն հիւանդութիան առաջն առնելու համար պետք է խիստ միջոցներ ձեռք առնել, որպէսզի հիւանդութիւնը չտարածուի և գիւղացիների մէջ:

զ) Պարտք ենք համարում յայտնել նաև որ մենք մեզ յանձնուած պարտականութիւնը չկարողացանք լրիւ կատարել, և այցելելով մեր շրջանի միայն 24 գիւղերը, մնացածները – Աշտարակ, Օշական, Մոլլաղուրսուն, Մուղնի, Եղվարդ և այլն – թողեցինք առանց այցելելու և նոցա մէջ բնակուող գաղթականների դրութիւնը ու կեանքը քննելու, որովհետև չարամիտ անձնաւորութիւններ իբրև նպատակ ունենալով վտանգի ենթակել թէ մեզ և թէ ընկերութեան տեղիս ճիւղին, յայտնել էին պ. Գաւառապետին, որ իբր թէ մենք շրջելով գիւղերը զանազան կեղծ միջոցներով, խաբել ենք գիւղացիներին և փողեր ենք ժողովել զանազան նպատակների համար: Այս պատճառով պ. Գավառապետը հրաւիրելով մեզ քննութեան մենք բացէ ի բաց մերժեցինք այդ զրպարտութիւնը և, յայտնելով մեր ճանապարհորդութեան բուն նպատակը, խնդրեցինք խիստ քննութիւն նշանակել և հաստատ տեղեկութիւններ ժողովել մեր գործունէութեան մասին գիւղերում: Սակայն պ. Գաւառապետը, երբ տեղեկացաւ, որ մեր նպատակն ու գործն է եղել ճիշտ տեղեկութիւն ժողովել գիւղերում ցրուած բոլոր գաղթականների դրութեան մասին, գովեց վարչութեանս եռանդը և իւր ուրախութիւնը յայտնելով վարչութեան տպաւորութեան մասին, խնդրեց ժողոված տեղեկութիւնները գաղթականների մասին հաղորդել իրեն պաշտոնապէս:

¹ Դառը դեղափոշի կամ դեղահաբ, որը ստացվում է խինի ծառից և օգտագործվում է իբրև տենդի դեղամիջոց:

² Ցավագրկոդ, ջերմաթողող և հակաբորբոքային դեղամիջոց:

Նախագահ վարչութեան՝ Ալեոիս Օհանջանեան
Անդամ վարչութեան՝ Պետրոս Սուքիասեան
Ճիշտ է իսկականի հետ՝ Քարտուղար
վարչութեան՝ Դ. Թատեւոսեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թթ. 112-113 (պատճեն, ձեռագիր):

**Lilit Kosyan – *Documents about the Western Armenian Migrants
Who Survived the Massacres in 1890s***

In 1890s 300.000 Western Armenians became victims of the massacres organized by Abdul Hamid II. The Armenians who managed to escape with their lives from the slaughtering policy began to migrate spreading all over the world. They were also persecuted on their way. Their naked and starving condition that made them fall victim on the one hand, and the Kurdish assaults on the other aggravated the condition of the miserable refugees. In order to lend them a helping hand, different charitable, social and religious organizations and companies were founded. The Armenian charitable fund of the Caucasus established in 1881 was among such companies, which had undertaken the greater part of humanitarian assistance to refugees. Part of the refugees settled in Vagharshapat. There are some documents given in the article which describe the condition of the refugees settled in Vagharshapat and the assistance shown to them. In these documents the Armenian charitable fund of the Caucasus describes the condition and the number of the refugees.